

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԱԵՂԲՈՐ ԳՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՍՄԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

Կիլիկյան Հայաստանի հոգևոր-մշակութային կենտրոններից մեկի՝ Գոնեք վանքի դպրոցի հիմնադիր Հովհաննես Արքաեղբայրն իր բազմադյուն գործունեությամբ և սկզբունքայնությամբ նպաստել է միջնադարյան գրչարվեստի զարգացմանը: Նրա անմիջական մասնակցությամբ, նաև նյութական հովանավորությամբ ստեղծվել են նպաստավոր պայմաններ և աշխատանքային միջավայր գրչագրության ու մանրանկարչության ծաղկման համար: Գրչական այն ժառանգությունը, որ թողել են Արքաեղբայրն ու իր աշակերտները՝ աշխատելով տարբեր քաղաքներում և գրատներում, գնահատվում են որպես գրքի գեղարվեստական ձևավորման փայլուն գանձեր, իսկ իրենք՝ տաղանդավոր արվեստագետներ:

Հովհաննես Արքաեղբայրը գործել և ճանաչում է ձեռք բերել ԺԳ դարի երկրորդ կեսին: Առաջին ձեռագիրը, որում հիշատակվում է նրա անունը, Երուսաղեմի 458 գրչագիրն է¹: Ձեռագիր հիշատակարաններում Հովհաննեսը ներկայանում է արքաեղբայր, եպիսկոպոս և արքեպիսկոպոս պատվանուններով և գնահատվում որպես «գաստուածապատիւ արհեպիսկոպոս արքաեղբայրն Հայոց», «սուրբ եւ ընտրեալ աստուածահաճոյ արքեպիսկոպոսին սուրբ ուխտին Գոնեքոյ», «դատապարտ ծառայակիցս», «տիեզերալոյս վարդապետ», «գաստուածապատեալ սուրբ եպիսկոպոսն տէր Յոհաննէս», «գրարեմիտ եւ գրարեսէրն», «գարթուն այցելու», «անուն բարի», «գրաբունն պանծալի», «գնուցիչ եւ գուսուցիչ»:

Հովհաննեսը Կիլիկյան Հայաստանի ավագ պարոնի՝ Կոստանդին թագապահի² և Բեատրիչեի³ որդին, ծնվել է 1220-ական թվականներին⁴: Մկրտության անունը Պաղտին է եղել⁵: Սկզբնապես կրթվել է

¹ Տե՛ս **Ն. Պողարեան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Յակոբեանց, հտ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 437:

² Կոստանդին խնամակալի գործունեության մանրամասն հետազոտությունը տե՛ս **Լ. Տեք-Պետրոսյան**, Խաչակիրները և հայերը, հտ. Բ, Եր., 2007, էջ 282-287:

³ 1242 թ. Ս. Փրկիչ եկեղեցու պատի արձանագրությունում հիշատակվում են Կոստանդինի առաջին ամուսնությունից հինգ որդիների և երեք դուստրերի անունները, որոնց մայրը Ալիծն է, իսկ երկրորդ ամուսնությունից ծնված զավակների անունները արձանագրված չեն: Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 75, 144:

⁴ Տե՛ս **Հր. Աճառյան**, Անձնանունների բառարան, հտ. Դ, Եր., 1948, էջ 361:

⁵ Տե՛ս ՄՄ 10480, թերթ 159բ: Այսուհետ մաշտոցյան մատենադարանի ձեռագրերի հղումները կտրվեն շարադրանքում փակագծերի մեջ նշելով ձեռագրի համարը և էջը:

Դրագարկի դպրոցում⁶ իր եղբոր՝ վանքի առաջնորդ և Մսի արքեպիսկոպոս (1241-1275) Բարսեղի մոտ, «որոյ երախտիք գերազանց է, քան զքանս եւ զմիտս ի կրսերս իւր»⁷: Հովհաննէսի կրթության հարցում մեծ ներդրում են ունեցել նաև Բեատրիչե մայրը և Հռիփսիմե կրոնավորուհին՝ Կոստանդին պալի դուստրը, «...զի յոյժ ջանիւ աշխատեցան յիս»⁸: 1259-ին Հովհաննէս Արքաեղբայրը Տարսոն քաղաքում մեծ հանդիսությամբ ձեռնադրվել է Մոլևոն և Բարձրբերդ գավառների հոգևոր առաջնորդ և անվանակոչվել տեր Հովհաննէս⁹: Այս տեղեկությունը արձանագրել է Հեթում պատմիչը. «ՉԸ. 1259 թագաւորն Հայոց Հեթում գնաց ի Տրապաւլիս ի աւգնութիւն իւր փեսային: Եւ ձիաւորեցոյց զորդին իւր զպարոն Թորոս: Եւ ձեռնադրեցաւ եղբայր նորա տէր Յոհաննէս եպիսկոպոս»¹⁰: Հիշատակարանները փաստում են, որ 1278-ից Հովհաննէսը հիշվում է արքեպիսկոպոս պատվանունով¹¹: Հովհաննէս Արքաեղբայրը վախճանվել է 1289-ին. «ՉԼԸ. փետրուարի վեցն մեռաւ Լեւոն թագաւորն: Եւ արքորեցաւ տէր Կոստանդին կաթողիկոսն: Ի նոյն մեռաւ տէր Յոհաննէս»¹²:

Հարկ է նշել, որ հայ միջնադարագիտության մեջ Հովհաննէս Արքաեղբոր կյանքին և գործունեությանը նվիրված տարբեր գիտական աշխատանքներ են գրվել¹³: Հատկապես հայ միջնադարյան մանրանկարչության ուսումնասիրության բնագավառում առանձին քննության առարկա են դարձել Հովհաննէս Արքաեղբոր անվան հետ կապված ձեռագրերի մանրանկարների պատկերագրական և գեղարվեստական առանձնահատկությունների բացահայտումները¹⁴: Մակայն Հովհաննէս բաբունու ծավալած գրչական գործունեությունը մինչ օրս ներկայացված և գնահատված չէ ամբողջությամբ: Ներկա աշխատանքը մի փորձ է ձեռագիր սկզբնաղբյուրների հետազոտության հիման վրա հա-

⁶ Տե՛ս **Ղ. Ալիշան**, Միսուան, էջ 144:

⁷ **Գ. Զարբհանսարեան**, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 688:

⁸ Catalogue of Armenian manuscripts in the United States, By Avedis K. Sanjian. University of California press, Berkeley. Los Angeles, London, 1976, p. 737-739: Հռիփսիմե կրոնավորուհու պատվերով 1270-ին Արիստակես գրիչը Լիսոնկա վանքում ձեռագիր է արտագրել (տե՛ս «Բանասեր», Կ. Պոլիս, 1899, էջ 130):

⁹ Տե՛ս **Ղ. Ալիշան**, Միսուան, էջ 144:

¹⁰ **Կ. Մաթևոսյան**, Հեթում պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը, Եր., 2011, էջ 52:

¹¹ Տե՛ս **Գ. Գալէմբեարեան**, Յուցակ հայերէն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Միւնխէն, Վիեննա, 1892, էջ 7-8: Միսուամբ Հովհաննէսի արքեպիսկոպոս ձեռնադրվելու թվական է նշվում 1286 թ. (տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., հտ. Գ, Եր., 1946, էջ 598):

¹² «Մանր ժամանակագրություններ», կազմեց **Վ. Հակոբյան**, հտ. Ա, Եր., 1951, էջ 105:

¹³ Տե՛ս **Ղ. Ալիշան**, Միսուան, էջ 144, **նույնի** Հայպատում, Վենետիկ, 1901, էջ 486-491, **Գ. Զարբհանսարեան**, նշվ. աշխ., էջ 711-712, **Ն. Օովակյան**, Գոներ, «Միոն», թ. 4, Երուսաղէմ, 1949, էջ 100-101, **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 598, **Մ. Ճևահիրճյան**, Գոների վանքը, «Էջմիածին», Դ, 2004, էջ 87-96:

¹⁴ Տե՛ս **S. Der Nersessian**, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the twelfth to the fourteenth century, vol. 1, 2, Washington, 1993, **Լ. Ագարյան**, Կիլիկյան մանրանկարչությունը 12-13-րդ դարերում, Եր., 1964, էջ 76-88:

մակոդմանի ուսումնասիրել Հովհաննես Արքաեղբոր մշակութային գործունեության այս ոլորտը:

Գոներ վանքի դպրոցի առաջին բաբունապետ Հովհաննես Արքաեղբոր պատվերով, սրբագրմամբ և ինքնագիր մեզ հայտնի 25 մատյանների հիշատակարանների տվյալները փաստում են, որ նա իր հիմնադրած դպրոցի կրթական ծրագրում հատկապես կարևորել է գրչության արվեստի հմտությունների ուսուցումն ու սկզբունքների կիրառումը: Որպես անհրաժեշտ պայման՝ դպրոցի «հմուտ» գրիչները պետք է տիրապետեին նաև «արուեստ գրոյն», և՛ «արուեստ քերականութեան»: Ինչպես փաստում են հիշատակարանները, Արքաեղբայրը գնահատանքով է խոսել «կիրթ» և «արհեստագետ» գրիչների մասին¹⁵, իսկ «յախմար գրչաց» օրինակումները վշտացրել են նրան¹⁶:

Ձեռագրեր օրինակելու համար Հովհաննես եպիսկոպոսը կարևորել է անսխալ և ճշգրիտ գաղափար օրինակների ընտրությունը: «Յընտիր», «ստոյգ», «դորդ», «լաւ եւ յընտրեալ» օրինակներից են օգտվել և՛ Հովհաննես բաբունին, և՛ նրա «ձեռնասուն» աշակերտները՝ Կոստանդին Ավրդցին, Վարդան Բարձրաբերդցին, Հոհանեսը, Մտեփանոս Վահկացին, Գրիգոր Պիծակը և ուրիշներ: «Ընտիր» ձեռագրեր արտագրելու համար Հովհաննեսը «ընտրեալ» օրինակներ «յոյժ փափագմամբ» ձեռք է բերել տարբեր գրատներից (ՄՄ 1315, 20ա) կամ ստացել «աննախանձ» նվիրողներից¹⁷:

Հովհաննես Արքաեղբոր գրչությամբ ձեռագրերը նույնպես գնահատվել են «ստոյգ» և «ընտիր» գաղափար օրինակներ: 1325 թ. «Ի վանս կոչեցեալ սուրբ Կիրակոսի» Ներսես գրագիրը օրինակել է Ավետարան «ի ստոյգ եւ յընտիր արիւնակե, որ ի Կիլիկիա յերկիրն, Արքաեղբայր անուն կոչեցեալ Յովհաննես եպիսկոպոս, որ իւրովք ձեռաւքն էր գրեալ լաւ եւ յընտիր արիւնակե...»¹⁸: 1328-ին Մկրտիչ քահանա գրագիրը՝ «ի թաղս Դուդուշի», Հովհաննես Արքաեղբոր գրած «ի ստոյգ և յընտիր» օրինակից արտագրել է Ավետարան մատյան¹⁹:

Անսխալ և ճշգրիտ գաղափար օրինակներ ունենալու համար Արքաեղբայրը կարևորել է ձեռագրերի սրբագրումը: Այս աշխատանքը Հովհաննեսը կատարել է մեծ պատասխանատվությամբ, խնամքով: Նա մատյանները անձամբ ստուգել կամ սրբագրել է, գաղափար օրինակից բացի, մի քանի օրինակների համեմատությամբ: Մաշտոցյան մատենադարանի (այսուհետև՝ Մատենադարանի) 5525 գրչագիրը, որ Հովհաննեսը արտագրել է ծեր հասակում, ուղղել, հղկել է 2 ձեռագրերի

¹⁵ Տե՛ս Մ. Քեշիշեան, Յուզակ ձեռագրաց Զմմատի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 243:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 239:

¹⁷ Տե՛ս Ն. Պողարեան, նշվ. աշխ., էջ 437:

¹⁸ Գ. Մրվանձտեան, Թորոս Աղբար, մաս Բ, էջ 295, Լ. Խաչիկյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺՂ դար, Եր., 1955, էջ 200:

¹⁹ Տե՛ս նույն տեղը:

համեմատությամբ. «Բ արիւնակս եղի առ իրեարս եւ յոյժ քրտնաջան եւ մեծախոնջ տաժանամբ ուղղեցի ըստ կարի, որպէս յայտ ահա գիտնոցդ երեւի՝ քանից եւ շեշտից եւ տանց եւ գրադարձից ծանալթից» (ՄՄ 5525, 226ա): Գլխավոր հիշատակարանը հուշում է նաև, որ Հովհաննէսը ձեռագիրը սրբագրել է համեմատելով անգամ 3 ձեռագիր. «Զյոյժ տաժանեալս յուղղոյն գիւտ, մանր է ասել գիր եւ փոքր դիրք. Գ արիւնակ բերեալ՝ զմին ուղղեցի, եւ զսա ետու գրել Սարգիս քահանայի եւ ես ուղղեալ յինէն կրկին եղբարքք մեր վաստակակցաւք»²⁰:

Արքաեղբայրը բազմիցս խոսել է սրբագրի «ծանր» և «քրտնաջան» աշխատանքի մասին: Մատենադարանի 7534 և 195 ձեռագրերում անդրադարձել է իր կատարած աշխատանքին. «... յոյժ աշխատեցա յուղղոյն սորա գիւտ»: Մեկ այլ ձեռագրում Հովհաննէսը ընդգծել է. «Ի մեծ աշխատութեամբ տաժանեցա յուղղելն ի վայելս եկելոցդ» (ՄՄ 345, 667ա):

Հովհաննէսն անսխալ օրինակումները կարևորել է ոչ միայն ժամանակին ընտրագույն ձեռագրեր բազմացնելու, այլև ապագա սերունդներին որպէս ժառանգություն փոխանցելու համար: Նա արտագրել է մատյաններ՝ «ի յիշատակ մեզ եւ վայելս ապագայից» (ՄՄ 10773, 264ա): Հովհաննէսը խնդրում է չհանդգնել գողանալ, վաճառել կամ աղավաղել գիրքը, այլ «վայելէք զսա եւ ժառանգէք... եւ որ մեզ լսէ եւ յիշէ՝ բիր բարիս ի Քրիստոսէ գտցէ» (ՄՄ 10773, 72ա): Մեկ այլ ձեռագրի հիշատակարանում նա վշտացած հայտնում է ծեր հասակում դժվարությամբ օրինակած Ավետարանի գողության մասին (տե՛ս ՄՄ 5525, 226ա):

Հովհաննէսը ներկա և ապագա օրինակողներին, ընթերցողներին բազմիցս հորդորել է խնամքով վերաբերվել ձեռագրերին. «Մի աղաւաղել տալ զսա անմիտ մանգամբք, մի մրճոտել, մի անառիգած եւ բերանաբաց ձգել, մի զգանձս հասարակաց գողանալ խորել եւ ծրարել իբր զժխտողն ստամբակ, մի գիտնոց խնայել եւ մի՛ արհեստագէտ գրչաց արգելուլ յարիւնակ տալոյ»²¹: Մեկ այլ հիշատակարանում նա նորից խնդրում է. «Աղաչեմ ինամ եւ գութ եւ մեծարանս առնել սմա իբր Աստուծոյ պատգամաւորի եւ հոգոց ծնողի, մի մրճոտել, մի պատառել...» (ՄՄ 10480, 337ա):

Հովհաննէս Արքաեղբոր գրչական գործունեության կարևոր մաս են նրա կատարած ընդօրինակումները: Նա արտագրել է ձեռագրեր և՛ իր անձնական օգտագործման, և՛ արքունական ընտանիքի անդամների համար: Օրինակումների համար Արքաեղբայրը տարբեր գրատներից պատվիրել է մատյաններ: Նաև իր գեղագիր ընդօրինակումներն է նվիրել տարբեր վանքերի գրատներին՝ հարստացնելով մատենադարանները: Հովհաննէսը ունեցել է գեղեցիկ ձեռագիր, քաջահմուտ է եղել և՛ բոլորգրի, և՛ երկաթագրի գրչության զանազան տեսակներին: Նրա ընդօրինակմամբ մեզ հայտնի ձեռագրերը գրվել են նուրբ, մշակված մագաղաթի վրա:

²⁰ Մ. Քեչիշեան, նշվ. աշխ., էջ 242:

²¹ Նույն տեղում, էջ 243:

Հովհաննեսի ընդօրինակումներից է վենետիկյան № 21 Աստվածաշունչը, որը գրվել և նկարագարովել է 1263-1271 թթ. ընկած ժամանակահատվածում: Արքաեղբայրը կատարել է Հեթում Ա արքայի դստեր՝ Ֆիմիի խնդրանքը²²: Գրչության վայրն անհայտ է:

1278 թ. Հովհաննեսը մագաղաթյա Ավետարան է արտագրել ընտիր գաղափար օրինակից՝ «ի վայելումն աստուածասէր իշխանին պարոն Սմբատ որդոյ հանգուցեալ եւ իշխանին պարոն Կոստանդեայ եւ հանգուցեալ մաւրն իւրոյ տիկին Շահանդիստին» (ՄՄ 264բ)²³: Մատյանը ծաղկել է Վասիլ գրիչը: Գիրքը կազմել է Սարգիս քահանայի աշակերտ Առաքել Հնագանդենցը 1278 թ.: Վերջինս կազմել է նաև 1271 թ. Վասիլ գրչի արտագրած Ավետարանը, որի պատվիրատուն Հովհաննեսն է²⁴:

Հակոբ հայրապետի մատենադարանից ընտրելով գաղափար օրինակը՝ Հովհաննեսը 1271 թ. հավանաբար Միս քաղաքում, արտագրել է Դիոնեսիոս Արիսպագացու աստվածաբանական երկերի ժողովածուն: Ձեռագիրը Վենետիկի 1529 գրչագիրն է²⁵, որի օրինակմանը մասնակցել են նաև Ստեփանոս և Վասիլ գրիչները: Արքաեղբայրը Միս քաղաքում է օրինակել նաև վենետիկյան 1066 ձեռագիրը, որը բովանդակում է Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ը²⁶: Ձեռագիրը նորոգել և թերի մասերը ամբողջացրել է Մաղաքիա դպիր Ճևահիրճյանը 1729 թ.:

Հովհաննեսի գրչագրած հաջորդ ձեռագիրը Մատենադարանի 5525 Ավետարանն է՝ օրինակված 1286-ին: Արքաեղբայրը ձեռագիրը արտագրել և սրբագրել է ծեր հասակում՝ «ծեր եւ ցաւոտ անձամբ» և «ակամբ ճայրոտեալ», ու նվիրել վանքապատկան Տիրոջ գյուղի եկեղեցուն՝ «յընթեռնուլ ի շահ աւգտի բնակչաց» (ՄՄ 5525, 226ա): Հիշատակարանը արձանագրում է, որ Տիրոջ գյուղը Լևոն Ռուբինյանց արքան է նվիրել Գոներ վանքին: Սկզբնաղբյուրը փաստում է նաև, որ 1284 թ. մարտի 13-ին մահացել է գրչի կրտսեր եղբայրը՝ Վասակը:

Մեկ այլ ինքնագիր Ավետարանի օրինակում էլ Հովհաննեսը նվիրել է Կոստընդնոց գյուղին: Ձեռագիրը 1280 թ. արտագրվել է Գոներ անապատում և այժմ պահվում է Մաշտոցի անվան մատենադարանում (ՄՄ 10773): Համաձայն հիշատակարանի՝ Բարձրաբերդի տեր Կոստանդին արքահայրը վերակառուցել է «Կարմիր գտակնի» գյուղը և վե-

²² Տե՛ս **Բ. Մարգիսեան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Ա, Վենետիկ, 1914, էջ 162-166: Ձեռագիրը արտագրվել է, հավանաբար, 1263 թ. (կամ հետո), երբ Ֆիմի արքայադուստրը վերադարձել է Հեթում արքայի արքունիք (տե՛ս նույն տեղը, էջ 165):

²³ **Գ. Գալէմբեարեան**, նշվ. աշխ., էջ 7-8:

²⁴ Տե՛ս **Ա. Մաթևոսյան**, Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Եր., 1984, էջ 410:

²⁵ Տե՛ս **Ս. Ճևաճևեան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Ը, Վենետիկ, 1998, էջ 173-178, նաև՝ **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 486:

²⁶ Տե՛ս **Հ. Ճևաճևեան**, նշվ. աշխ., հտ. Զ, Վենետիկ, 1996, էջ 624-630:

բանվանել իր անունով (ՄՄ 10773, 264բ)²⁷: Ձեռագիրը գրվել է «ի յոյժ տրտմութեան ժամ, զի այս երիցս անգամ քրիստոսատեաց տաճիկքն Եգիպտոսի հրձիգ զամենայն Կիլիկայ արարին զորս հուրն անշեջ կիզեցէ զնոսս» (ՄՄ 10773, 264բ): Հիշատակարանում Հովհաննէսը գնահատել է Լևոն արքային. «Իբրև զգլխած հայր ժողովէ եւ մխիթարէ զմնացեալսն» (ՄՄ 10773, 265բ):

Հովհաննէս Արքաեղբոր ուղղած և սրբագրած ձեռագրերից են նաև երուսաղեմյան ընտիր մագաղաթյա 2568 ձեռագիրը, որն օրինակվել է պարոն Վասակի պատվերով²⁸: Վերջինս մահացել է 1284 կամ 1285 թթ.: Հավանաբար այս թվականներին կամ դրանից առաջ է կատարվել ձեռագրի գրչությունը: Վասակը նույնացվել է 1279-ին Լևոն թագավորի կողմից Սիկիլիո թագավորի մոտ ուղարկված Վասակի հետ²⁹: Հովհաննէսը սրբագրել է նաև իր պատվերով 1289 թ. գրված «Մեկնութիւն Սաղմոսաց Դանիէլ վարդապետի Ասորւոյ» ձեռագիրը³⁰: Մատյանը արտագրել է Սարգիս «նորակերտ» գրիչը՝ Ոսնկա վանքում: Ձեռագրում բազմաթիվ են Հովհաննէս Արքաեղբոր ինքնագիր հիշատակարանները:

Գրչական արվեստի բացառիկ հուշարձաններից է Հովհաննէս եպիսկոպոսի 1287 թ. օրինակած Ավետարանը: Այն համարվում է կիլիկյան և ընդհանրապես հայկական մանրանկարչության ամենաճոխ պատկերազարդ մատյաններից (ՄՄ 197): Մագաղաթյա ձեռագիրը գրվել և նկարազարդվել է Կիլիկիայի Ակներ վանքում: Ինչպես հավաստում են հետագա հիշատակությունները, ձեռագիրը խոնավությունից բավականին վնասվել էր՝ «փտեալ, եղծեալ, ապականեալ», և Մարտիրոս Ֆոնոսցի քահանայի հոգածությամբ այն նորոգել է Վասիլ արեղան 1590 թ. (ՄՄ 197, 349ա):

Ուշադրության արժանի են հատկապես Հովհաննէս Արքաեղբոր և իր աշակերտների՝ ժամանակի գրչության և մանրանկարչության հայտնի վարպետներ Ստեփանոս Վահկացու, Կոստանդին Ավրդցու և Գրիգոր Պիծակի համատեղ աշխատանքները: Ձեռագրերը հիմնականում սկզբնագրել է Արքաեղբայրը: Այս արժեքավոր ընդօրինակչություններից է Հովհաննէսի պատվերով 1286-ին Տիրոջ գյուղի նորակերտ տաճարում Կոստանդին Ավրդցի գրչի օրինակած «Մատունք նոր Կտակարանի» մատյանը (ՄՄ 196): Ձեռագիրը նկարազարդել են Ստեփանոս Վահկացին և Գրիգոր Պիծակը:

Հաջորդ ձեռագիրը, որի գրչությանը «սակաւիկս» մասնակցել է

²⁷ Տե՛ս Մ. Ճևահիրճյան, նշվ. աշխ., էջ 92: Ղ. Ալիշանի կարծիքով՝ Կարմիր գտակնի գյուղում ԺԳ դարում ապրել են կա մ թուրքեր, կա մ պարսիկներ (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 146):

²⁸ Տե՛ս Ն. Պողարեան, նշվ. աշխ., հտ. 11, Երուսաղեմ, 1991, էջ 395-400: Ն. Պողարյանը ձեռագիրը նկարագրելիս ծանոթագրում է. «Բոլորգի վայելուչ, նրբագիծ զարդագիր եւ լուսանցազարդ հատուածներու սկիզբը, խորանագարդք հոյակապ, բազմաթիվ լուսանցանկարք»:

²⁹ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., հտ. Ե, Եր., 1962, էջ 52, Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 76, 363:

³⁰ Տե՛ս Մ. Քեշիշեան, նշվ. աշխ., էջ 239:

Հովհաննեսը, Մատենադարանի 10480 ժողովածուն է: Արքաեղբոր պատվերով գրքի օրինակումը շարունակել և ավարտել են 1286 թ. հավանաբար Բարձրաբերդի վանքում, Վարդան Բարձրաբերդի և Բարսեղ գրիչները: Գիրքը բովանդակում է Իգնատոսի, Նանան սարկավազի, Թետալիոս եպիսկոպոսի, Ներսէս Լամբրոնացու գործերը: Մատենադարանի 3710 թղթյա ժողովածու մատյանը Հովհաննեսի պատվերով ընդօրինակվել է 1278-1289 թթ. ընկած ժամանակահատվածում: Ձեռագրի 1-28 թերթերը գրել է Հովհաննես եպիսկոպոսը, իսկ շարունակությունը՝ անանուն գրիչը, Ստեփանոս Վահկացին և Թորոսը:

Արքաեղբոր և Հակոբ գրչի համատեղ աշխատանքներից է Մատենադարանի 1315 ժողովածուն: Հովհաննեսը սկզբնազրել է առաջին քսան թերթերը: Պարզվում է, որ ձեռագրի գաղափար օրինակը Հովհաննեսի ցանկությամբ բերվել է Հռոմկլայից՝ «զի չկայր յերկիրս, եւ ես ձեռամբ իմով գրեցի» (ՄՄ 1315, 20ա): Ձեռագիրը գրվել է «յոյժ վշտաբեր աւուրսս»: Հակոբ գրիչը խնդրում է հիշել Պանդալեոն քահանային, որը ոմն Հովսեփի օգնությամբ հունարենից հայերեն է թարգմանել «Պատմութիւն գիւտի մատին Ս. առաքելոյն Պետրոսի» գործը: (1315, 5բ): Այս «անյարմար եւ խիրթն» թարգմանության վրա աշխատել է նաև Կիրակոսը՝ Գեորգիի (մականունը Մեղրի) հորդորով (ՄՄ 1315, 452բ):

Բազմաթիվ ձեռագրերի ընդօրինակումների և պատկերագրաման համար Հովհաննես Արքաեղբայրը եղել է պատվիրատու: Այդ ձեռագրերի մի մասում պահպանվել են նրա ինքնագիր հիշատակարանները: Արքաեղբոր պատվերով ընդօրինակվել է Ներսէս Լամբրոնացու «Տեսութիւն պատմութեան բանից ննջման սրբոց աւետարանչին Յովհաննու» գործը³¹:

Կոստանդին հայրապետի և Հեթում արքայի թագավորության շրջանում Թորոս քահանան 1263 թ. Գոներ վանքում Հովհաննեսի համար ավարտել է Ավետարանի օրինակումը³²: Հիշատակարանը արձանագրել է Կոստանդին արքահոր մահվան թվականը՝ 1263 թ. փետրվարի 26: Գրչագրում պահպանվել է Կոստանդին նկարչի հիշատակարանը:

Հաջորդ ձեռագիրը, որ արտագրվել է Հովհաննեսի համար, Վիեննայի 245 ճաշոցն է³³: Համաձայն վկայության՝ մատյանը գրվել է այն ժամանակ, երբ արդեն մահացել էր Հովհաննեսի եղբայրը՝ Հեթում արքան՝ 1270 թ. (213ա)³⁴: Անհայտ գրչի հիշատակության մեջ Հովհաննեսը

³¹ Տե՛ս **Ն. Պողարեան**, նշվ. աշխ., էջ 437: Ձեռագրագետները նշում են մատյանի գրչության տարբեր թվականներ՝ 1255 թ., ԺԳ դար (տե՛ս **Ա. Մաթևոսյան**, նշվ. աշխ., էջ 281, **Ն. Պողարեան**, նշվ. աշխ., էջ 437): Քանի որ Հովհաննեսը եպիսկոպոս է ձեռնադրվել 1259 թ., և ձեռագրում նա արդեն հիշվում է այդ պատվանունով, կարծում ենք, մատյանի օրինակումը կատարվել է 1259-ից ոչ շուտ: Հովհաննեսի հիշատակարանը պահպանվել է նաև երուսաղեմյան 425 ձեռագրում:

³² Տե՛ս **Ա. Sanjian**, նշվ. աշխ., էջ 737-739:

³³ Տե՛ս **Հ. Տաշեան**, Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեան ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 633:

³⁴ Տե՛ս **Հ. Տաշեան**, նշվ. աշխ., էջ 635: Ըստ Հ. Տաշեանի՝ ձեռագրի գրչությունը կատարվել է 1270-1289 թթ. միջև ընկած տարիներին:

հիշվում է որպես «արքեպիսկոպոս եւ տիեզերալոյս վարդապետ»: Ուստի գրքի օրինական ժամանակը կարելի է թվագրել 1278-ից:

Գրչական և մանրանկարչական արվեստի կատարյալ աշխատանքներից է «ի վայելումն» Հովհաննեսի 1266 թ. օրինակված Մատենադարանի 4243 Աստվածաշունչը: Բարձրաբերդի վանքում Ստեփանոս Վահկացու գրչագրած այս ձեռագիրը նկարագարոված է Սուրբ գրքի ու պատվիրատուի նկարներով, լուսանցագարդերով և կիսախորաններով: Հավանաբար նկարիչը Ստեփանոսն է: Ձեռագրում հիշատակվում է գրչության երկու թվական՝ 1263 և 1266 (ՄՄ 4243, 129ա, 123ա): Հովհաննես Արքաեղբոր ինքնագիր հիշատակարանում նկարագրվել են պատմական տխուր իրադարձությունները՝ «դառն եւ յանբարի եւ յոյժ վշտալի» ժամանակները՝ 1266 թ. եգիպտական գորքի արշավանքը դեպի Կիլիկիա, Մառիի ճակատամարտը³⁵: Արքաեղբայրը ընդգծում է Լևոն արքայի հոգատարությունը և մեծ ջանքերը «ամենեցունց փրկութեան» համար, «գոր Տէր Աստուած պահեսցէ փրկութեան զօակ Հայոց, զի մի՛ Սողոմա և Գոմորա նմանիցիմք»: Ձեռագրում արձանագրվել է արքաեղբայր պարոն Օշինի մահվան թվականը՝ 1265 թ. դեկտեմբեր:

Գրչության արվեստի գեղեցիկ հուշարձաններից է 1270 թ. Արքաեղբոր պատվերով Հովհաննես քահանայի օրինակից Բարսեղ եպիսկոպոսի ընդօրինակած՝ 816 թերթից կազմված թղթյա Աստվածաշունչը (ՄՄ 345): Գրչության վայրն անհայտ է: Ձեռագիրը կազմել է Կիրակոս ծերունի քահանան (ՄՄ 345, 129ա-130բ), իսկ ցանկերը՝ Թորոս Ըռոբինյանցը 1358 թ. (ՄՄ 345, 72ա, 138բ, 161բ, 203ա և այլն): Վերջինիս հիշատակարանից պարզվում է, որ ձեռագրի երկրորդ ստացողը պարոն Կոստանդինն է՝ Հեթում Ա թագավորի որդին³⁶: Մատյանում արձանագրվել է Հեթում արքայի մահվան թվականը՝ 1270 թ. հոկտեմբերի 29 (ՄՄ 345, 145ա):

Մատենադարանի 4515 ձեռագիրը՝ Գևորգ Սկևռացու «Լուծմունք գրոցն Եւագրի Պոնտացոյ» գործը, Հովհաննես րաբունու պատվերով 1278 թ. ընդօրինակել է Հոհանես աշակերտը: Պատվիրված հաջորդ ձեռագիրը Կոստանդին գրչի՝ 1284 թ. Գոներ վանքում արտագրած Աստվածաշունչն է (ՄՄ 195): Գրչության ժամանակը հստակեցնում է 118բ թերթի հիշատակությունը. «Ի թուականութեան ՉԼԳ (1284), ի ժամ սորին գրութեան, փոխեցաւ Քրիստոս բարեպաշտ իշխանաց իշխանն արքաեղբայրն հայոց և տեառնս Վասակ՝ տէր Ճանճոյն, ի մարտ ամսոյ ի ԺԳ (13)...»: 1288-ին ձեռագիրը մասամբ լրացրել է Հովհաննեսը³⁷:

Հովհաննես Արքաեղբոր պատվերով մի քանի օրինակումների

³⁵ Մառի կամ Գուգլակի կապան՝ լեռնանցք է Կիլիկիայի Տավրոս լեռնաշղթայում (տե՛ս Թ. **Հակոբյան**, Ստ. **Մելիք-Բախշյան**, Զ. **Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների բառարան, հտ. Ա, Եր., 1986, էջ 970, հտ. Գ, Եր., 1991, էջ 700):

³⁶ Տե՛ս Զր. **Աճառյան**, նշվ. աշխ., հտ. Բ, էջ 661: Ձեռագրում Կոստանդինի եղբոր՝ պարոն Ճուֆրիի մահվան առիթով արտագրվել է մի ողբ (ՄՄ 570բ):

³⁷ Տե՛ս Ա. **Մաթևոսյան**, նշվ. աշխ., էջ 564:

բուն հիշատակարաններն ու գրչության հանգամանքները անհայտ են: Հավանաբար 1259-1278 թթ. ժամանակահատվածում է ավարտվել Ճաշոցի և «Գործք Առաքելոցի» օրինակումը³⁸: Ձեռագրի 517բ թերթում գրվել է անանուն գրչի չափածո հիշատակարանը՝ նվիրված Արքաեղբորը: Իսկ Նոր Ջուղայի 397 ձեռագրի՝ «Եպիփանու Կիպրացոյ Կ. Պոլսոյ եպիսկոպոսի» գրքի գրչության վերջին թվական կարելի է համարել 1289 թ.՝ Հովհաննես Արքաեղբոր մահվան տարին³⁹: Ձեռագիրը վերակազմվել է 1634 թ.՝ Մանուկի որդի ոսկեգործ Մուրատ Սարգսի կողմից: Հովհաննեսի հանձնարարությամբ Ներսիսուկ գրիչը 1289 թ. ավարտել է «Տրամախօսութիւն» աշխատությունը (ՄՄ 4947):

Հովհաննես Արքաեղբայրը բազմիցս համագործակցել է ժամանակաշրջանի հայտնի գիտնական, ուսուցիչ, նկարիչ, գրչության արվեստի տեսաբան Գևորգ Սկևռացու հետ: 1283 թ., «ի պատկառելի խնդրոյ Յոհաննու եպիսկոպոսի», Գևորգ Սկևռացին հորինել է «Դրուատ ի սուրբ առաքեալն եւ Աւետարանիչ Յովհաննէս» ներբողյանը: Հովհաննեսի հանձնարարությամբ մինչև 1289 թ. Գևորգ Սկևռացին գրել է «Գործք Առաքելոց»-ի խմբագիր մեկնությունը⁴⁰: Մեկնության առաջին օրինակումը, որ հասել է մեզ, Մատենադարանի 4119 ձեռագիրն է՝ գրված 1289 թ.:

Ձեռագիր աղբյուրները փաստում են նաև Արքաեղբոր գործունեության մեկ այլ ոլորտ: Հովհաննեսը մասնակցել է վանքերի բարեկարգմանն ու կառուցմանը: Ինչպես հայտնում է 1286 թ. օրինակված Ավետարանի հիշատակարանը, Յովհաննեսը իր նյութական միջոցներով 1272 թ. կառուցել է սուրբ Յովհաննու Ավետարանչի անունով մատուռ: Հովհաննեսը մանրամասնել է. «Եւ ես սակս պիտոյից իմոց շինեցի զսուրբ Յովհաննէս, զոր եւ ես ըստ կարի պատշաճին զարդարեցի զգետիւք» (ՄՄ 5525, 226ա): Կոստանդին Ավրոցին հիշատակում է, որ Տիրոջ գյուղում 1284 թ., հավանաբար Հովհաննեսի աջակցությամբ, կառուցվել է Սուրբ Հոգի «նորակերտ տաճարը... որ է սեփհական ժառանգութիւն սուրբ անապատին Գոնէրոյն» (ՄՄ 196, 76բ, 111բ):

Այսպիսով, հայ միջնադարյան գրչարվեստի և մանրանկարչության զարգացման ընդհանուր շրջայում անգնահատելի են և՛ Հովհաննես Արքաեղբոր, և՛ իր հիմնադրած գրչության կենտրոնի դերն ու նշանակությունը: Հովհաննեսի 30 տարվա (1259-1289) եռանդուն աշխատանքն ու «անպարապութիւնը»⁴¹՝ աջակցել և հովանավորել վանական դպրոցներին, գրատներին, գրչության մշակներին, կառուցել վանական նոր շինություններ, շարունակվել են մինչև նրա կյանքի վերջը:

³⁸ Տե՛ս «Բանբեր մատենադարանի», հտ. 11, Եր., 1973, էջ 415-416:

³⁹ Տե՛ս **Ս. Տէր-Աւետիսեան**, Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 598-600:

⁴⁰ Տե՛ս «Մեկնութիւն Գործոց առաքելոց», աշխատասիրութեամբ Յ. Բաղալեանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2013:

⁴¹ Տե՛ս **Ն. Պողարեան**, նշվ. աշխ., էջ 437:

Բանալի բառեր – *Կիլիկիա, Գրներ վանք, գրչության կենտրոն, Տիրոջ գյուղ, Ստեփանոս Վահկացի, Գրիգոր Պիծակ*

АСМИК БАДАЛЯН – Деятельность Ованеса Царебрата по переписке манускриптов. – В истории армянской культуры велика заслуга киликийского мецената, основателя и главы школы каллиграфии Ованеса Царебрата (1220-е гг. – 1289). Свыше трёх десятилетий Ованес покровительствовал монастырским школам, книгохранилищам и переписчикам, содействовал строительству обителей. Частью его многогранной деятельности являлось преподавание каллиграфии. Как свидетельствуют источники, он руководствовался при этом рядом принципов. Ованес ценил образованных, знающих своё ремесло и не допускающих ошибок переписчиков, придавал значение выбору «отменных и верных» текстов, корректировал их, сравнивая ряд рукописей между собой, и требовал ухода за ними, чтобы те послужили также грядущим поколениям. С участием Ованеса Царебрата, по его заказу и выбору были созданы и проиллюстрированы 25 описанных в статье манускриптов.

Ключевые слова: *Киликия, монастырь Грнер, центр каллиграфии, село Тиродж, Степанос Вахкаци, Григор Пицак*

HASMIK BADALYAN – The Writing Activity of Hovhannes the King’s Brother. – Great is the merit of Hovhannes the King’s Brother, art patron, founder, and head of the Grner School of calligraphy, in the history of the development of Armenian culture and calligraphy. During the thirty years of his activity, Hovhannes promoted and patronized the monastic schools, manuscript repositories, the scribes, and participated in the construction of monasteries. Teaching calligraphy was part of his multifaceted activity. As manuscript sources testify, Hovhannes was guided by several principles. He valued the “educated” and “professional” scribes and attached importance to the creation of error-free manuscripts, the selection of “excellent” and “faithful” primary sources, and the adjustment of manuscripts by comparing them with several others. Hovhannes appreciated the correct copying and care of manuscripts not only for his time but also for passing them on to future generations. With the participation of Hovhannes the King’s Brother, on orders or by choice, twenty-four manuscripts were written and illustrated, the description of which is presented in the article.

Key words: *Cilicia, Grner monastery, center of calligraphy, Tirog Village, Stepanos Vahkatsi, Grigor Pitsak*

Ներկայացվել է՝ 10.10.2019

Գրախոսվել է՝ 31.10.2019

Ընդունվել է տպագրության՝ 29.11.2019